
Առաջին փուլի հիմնական խնդիրը հնչյունական, բառային ու քերականական այն հիմնական հատկանիշների ընտրությունն էր, որոնցով հետագայում պիտի որոշվեին հայերենի բարբառների՝ միմյանց նկատմամբ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

Բարբառային տարբեր տարածքներին հատուկ առավել բնորոշ զուգաբանությունների /իզոգլոս/ ընտրությունը հնարավորություն տվեց 1977 թվականին հրատարակել «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր» /այսուհետև՝ Ծրագիր/ խիստ արժեքավոր աշխատանքը, որը հիմնականում կազմել է հայոց լեզվի պատմության և բարբառագիտության երախտավոր, հանգուցյալ Հ. Մուրադյանը: «Քերականական զուգաբանություններ» բաժնի կազմությանը նրան օգնել են բանասիրական գիտությունների թեկնածուներ Ա. Վ. Գրիգորյանը, Դ. Մ. Կոստանդյանը և Ա. Ն. Հանեյանը:

Ծրագրի հրատարակումից հետո մշակվել են բարբառային նյութի հավաքման և գրանցման որոշակի սկզբունքներ:

Լեզվաբանական աշխարհագրության մեջ ընդունված է այն տեսակետը, որ բարբառային երևույթները կենտրոնից դեպի ծայրամասերը շարժվում են հավասարաչափ. «If we travel from village to village in a particular direction, we notice linguistic differences which distinguish one village from another. Sometimes these differences will be larger, sometimes smaller, but they will be cumulative. The further we get from our starting point, the larger the differences will become”.[1]

1 J. K. Chambers, P. Trudgill, Dialectology, Cambridge, 1980, p. 6:

Առաջնորդվելով այս դրույթով՝ սովորաբար ատլասի համար ընտրվում է բնակավայրերի մի այնպիսի ամբողջություն, որի վրա նշված կետերը միմյանցից գտնվում են համաչափ հեռավորության վրա: Նման պարագայում անհրաժեշտ չէ լրացնել բոլոր բնակավայրերի խոսվածքները: Սակայն հիշյալ սկզբունքը ընդունելի է ոչ բոլոր լեզուների համար: Այն կարող է կիրառվել միայն այնպիսի բարբառների դեպքում, որոնց կրողները տեղաշարժերի չեն ենթարկվել:

Ատլասի բնակավայրերի ընտրության վերոհիշյալ մոտեցումը ընդունելի չէ հայերենի բարբառների համար, քանի որ հայ ժողովրդի բազմաթիվ գաղթերն ու տեղահանությունները փոխել են հայերենի բարբառների տեղադրության նախնական պատկերը. «Հայերենի ատլասի համար ամենաճիշտ սկզբունքը՝ անխտիր բոլոր հայախոս բնակավայրերը հարցման ենթարկելն է, անկախ այն բանից, թե այդ բնակավայրերը կմտնեն քարտեզների մեջ, թե ոչ: Այդ ձևով նյութերի հավաքումը մի կողմից հնարավորություն կտա հայտնաբերելու իրենց բնօրրանից կտրված ու այլուր տեղափոխված բարբառային միավորները, որոնք քարտեզագրման ժամանակ կտեղադրվեն իրենց պատմական միջավայրում, մյուս կողմից՝ համատարած հարցումից հետո դժվար չի լինի քարտեզների համար ընտրել ավելի տիպական բնակավայրերը և դրանով իսկ ապահովել բնակավայրերի ցանցի անհրաժեշտ խտությունը»:[2]

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ հարցման ենթակա ելակետային միավորը համարվել է ոչ թե բարբառը. այլ կոնկրետ բնակավայրի խոսվածքը, և նյութերը սկսել են հավաքվել բոլոր հայաբնակ վայրերից:

Ատլասի համար նյութերի հավաքման աշխատանքները սկսվել են 1977թ: Դրանք կատարվել են գիտարշավների միջոցով, որոնց ընթացքում ուսումնասիրվել են տվյալ տարածքի բոլոր բնակավայրերը: Բարբառային միավորները գրանցվել են ըստ Ծրագրի:

Ծրագիրը կազմված է բառային, քերականական և հնչյունական զուգաբանություններն ընդգրկող բաժիններից: Առաջին բաժինը՝ «Բառային զուգաբանություններ», կազմված է երկու մասից՝ «Հասկացական-բառանվանողական զուգաբանություններ» և «Բառիմաստային զուգաբանություններ»:

«Հասկացական-բառանվանողական զուգաբանությունների» խնդիրն է պարզել բառային նույն միավորի դիմաց տարբեր վայրերում գործառող տարբերակները: Այն ընդգրկում է 478 հոդված՝ 1-478: Հասկացությունները ներկայացված են ըստ իմաստային դաշտերի՝ բնության երևույթներ, բույսեր, գործիքներ, հագուստ, զբաղմունք և այլն: Յուրաքանչյուր հոդված կազմված է տվյալ հասկացության գրական անվանումից, բառաշարքից, որի մեջ մտնում են այդ հասկացության մինչ այդ հայտնի բարբառային տարբերակները, և հասկացության իմաստը պարզաբանող օրինակից: Այսպես՝

288. Դառն - դառը, աղու, լեղի:

Կորիզը դառն է:[3]

Հոդվածում բերվող բառաշարքը, սակայն, սպառիչ չէ, և գրանցումների ընթացքում արձանագրվել են նորանոր տարբերակներ:

Բառային զուգաբանությունների երկրորդ՝ «Բառիմաստային զուգաբանություններ» հատվածի խնդիրն է պարզել բառային նույն միավորի իմաստային

2 Տես Հայերենի բարբառագիտական ատլաս, մաս 1, Երևան, 1982, էջ 21:
3 Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Երևան, 1977, էջ 52:

տարբերությունները բարբառախոս վայրերում: Այն բաղկացած է 80 հոդվածից /479-559/:

Հիշյալ բաժնում նախապես տրվում է զուգաբանությունը, որից հետո նշվում են տվյալ հասկացության բարբառային իմաստները, այսպես՝

517. Դեղ – 1. Բուժման միջոց: 2. Թույն: 3. Սկնդեղ: 4. Քթախոտ: 5. Աչքի ծարիր: 6. Պաների մակարդ:[4]

Ծրագրի երկրորդ բաժինը քերականական զուգաբանություններն են, որն ընդգրկում է ձևաբանական, մասամբ նաև՝ շարահյուսական հատկանիշներ: Այն կազմված է 120 հոդվածից՝ 560-680: Այս հատվածում փորձ է արվում պարզել, թե տվյալ քերականական իմաստի արտահայտման համար ձևական ինչ միջոցներ են գործառում բարբառախոս վայրերը: Այդ պատճառով նախ տրվում է քերականական իմաստը և դրսևորման ձևերը, որից հետո բերվում են օրինակներ, այսպես՝

577. –ություն ածանցով բառերի հոլովումը՝

ա/ ներքին ա հոլովմամբ /մեծութուն – մեծութան, լավութուն – լավութան/

բ/ ի հոլովմամբ /մեծութէնի, լավութէնի/

գ/ ու հոլովմամբ / մեծութունու, լավութունու/

աղքատության, բարձրության, եղբայրության, երկարության, լայնության, կարճության, հաստության, մեծության, չարության, քաջության…[5]

Ծրագրի երրորդ բաժնի՝ «Հնչյունական զուգաբանությունների» խնդիրը պատմական հնչյունափոխության երևույթների բացահայտումն է: Այս բաժնի զուգաբանությունները, որոնց թիվը հասնում է հարյուրի՝ ընդգրկելով 668-778 համարները, ունեն նախորդ բաժնի զուգաբանությունների կառուցվածքը:

Նյութերի հավաքումը ըստ Ծրագրի կատարվել է ամեն մի բնակավայրի համար առանձին մեկ տետրի մեջ: Եթե մի քանի վայրեր ունեցել են նույն խոսվածքը, ապա դրանք ներկայացվել են մեկ տետրում՝ նշելով այդ բնակավայրերը:

Տետրի սկզբում տրվում են տեղեկություններ գրանցվող վայրի, բնակիչների, խոսվածքի, գրանցման աղբյուրի՝ բարբառախոսների, ինչպես նաև խոսվածքը գրանցողի վերաբերյալ:

Առ այսօր ըստ Ծրագրի լրացված է մոտ 500 բարբառային միավոր Հայաստանի արևելյան և արևմտյան տարածքներից: Ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան վայրերի նյութերը հավաքված են Հայաստանի Հանրապետության տարածքում: Արևմտյան տարածքի բարբառային միավորները գրանցվել են 1915 թվականից հետո Հայաստան եկած մարդկանց օգնությամբ, որոնք հաճախ տվյալ բնակավայրի միակ բնակիչն են եղել, հետևաբար բարբառային միավորի միակ կրողը:

Այժմ բարբառային նյութի հավաքման սկզբունքների, հավաստիության և գրանցման ժամանակ առկա դժվարությունների մասին:

Նյութը գրանցելիս կարևոր պայման է բարբառախոսների ճիշտ ընտրությունը, որոնց տեղեկություններից է կախված տվյալների հավաստիությունը: Փորձը ցույց է տվել, որ հավաստի տվյալներ հաղորդվել են նրանց կողմից, ովքեր երկար ժամանակ ապրել և շարունակում էին ապրել մայրենի խոսվածքը կրողների միջավայրում: Դժվարություններ էին առաջանում հատկապես արևմտահայ

4Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր,էջ 73:
5Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, էջ 81:

տարածքի խոսվածքները լրացնելիս: Արևմտյան Հայաստանից գաղթած բարբառախոսները, երկար ժամանակ կտրված լինելով հարազատ միջավայրից, չէին կարողանում պատասխանել այս կամ այն հոդվածին վերաբերող հարցերին, հաճախ նաև չէին կողմորոշվում, թե իրենց կողմից գործածվող ձևերից որն է պատկանում մայրենի խոսվածքին: Ճիշտ է, ծրագրում ընտրված լեզվական հատկանիշները համակարգային բնույթ ունեն և դժվար մոռացվող են, բայց գրանցումների ընթացքում քիչ չեն պատահել նման դեպքեր: Այսպիսի դեպքերում այդ բացը լրացվել է շրջակա գյուղերի խոսվածքների տվյալներով, որոնք կամ արդեն գրանցված էին կամ էլ ծանոթ էին գրանցողին, որը կարողացել է կողմնորոշել տեղեկատու անձին՝ նրան հիշեցնելով շրջակա վայրերում գործածվող ձևերը: Հավելենք, որ նման մեթոդով աշխատելու դեպքում բարբառախոսները արագ կողմորոշվում էին և հիշում մայրենի խոսվածքին հարազատ բարբառային տարբերակները:

Այս պարագայում պակաս կարևոր չէ նաև նյութը գրանցողը, որի մասնագիտական պատրաստվածությունից ևս կախված է գրանցվող նյութի հավաստիությունն ու լիակատարությունը: Այդ պատճառով էլ նյութի հավաքումը հիմնականում կատարվել է մասնագետ-բարբառագետների կողմից, որոնք գիտական շահագրգռվածություն են հանդես բերում գրանցվող տվյալների նկատմամբ:

Դժվարություններից մեկն էլ այն էր, որ հաճախ բարբառախոսներին հարկ էր լինում համոզել սկսած աշխատանքը հաջողությամբ ավարտելու համար, մանավանդ երբ բարբառախոսների ընտրության հնարավորություն չէր լինում: Դա բացատրվում է նրանով, որ ծրագիրն ընդարձակ է, և մեկ խոսվածքի գրանցումը տևում է 6-7 օր, հետևաբար միշտ չէ, որ բարբառախոսները, որոնց տարիքը տատանվում էր 70-100-ի միջև, սիրով համաձայնում էին տեղեկություններ հաղորդել: Նման դեպքերում պարզ ու հասկանալի բացատրվում էր գործի կարևորությունը, ընգծվում էր այն կարևոր փաստը, որ չհրաժարվելու դեպում կփրկվի գոնե իրենց հարազատ գյուղի լեզուն և կհանձնվի սերունդներին, բացի այդ, ասվում էր, որ մենք ոչ թե երկար պատմություններ ենք ուզում, այլ ուզում ենք իմանալ՝ ինչպես են ասում իրենց գյուղում այս կամ այն ուտելիքին, բույսին, գործիքին: Այս բոլորից հետո նրանք աստիճանաբար տեղի էին տալիս և համաձայնում սկսել գործը: Դրան նպաստում էր նաև Ծրագրի կառուցվածքը, քանի որ այն սկսվում է «Բառային զուգաբանություններ» բաժնով, որը «…լինելով «Ծրագրի» առավել հետաքրքիր ու հեշտ ընկալելի բաժինը, շարժում է տեղեկատու անձանց հետաքրքրասիրությունը, նրանց հոգեկան աշխարհում արթնացնում է առանձնակի ապրումներ, հուշեր ու տպավորություններ, պարգևում է լեզվազգացողության հրճվալից պահեր և արվող գործի նկատմամբ առաջացնում է որոշակի ոգևորություն»:[6]

Թեև նյութերի հավաքումը դեռ ավարտված չէ, սակայն ծրագրի կառուցվածքը հնարավորություն է տալիս սկսել գրանցված նյութի մշակումը և համակարգչայնացումը: Այդ աշխատանքը կատարելու համար մեր կողմից ընտրվել է File maker ծրագրով: Մինչև նյութի համակարգչայնացումը այն պետք է մշակվի և դասակարգվի: Սա երկարատև աշխատանք է և նյութի լավ իմացություն է պահանջում: Սակայն քանի որ Ծրագրում, որի համաձայն հավաքվել է նյութը, լեզվական հատկանիշները ներկայացված են զուգաբանությունների ձևով, այդ փաստը դյուրացնում է նյութերի հավաքման և մշակման աշխատանքները: Ակնհայտ է, որ լեզվական հատկանիշները զուգաբանությունների տեսքով

6 Տես Հայերենի բարբառագիտական ատլաս, մաս 2, Երևան, 1985, էջ 17:

ներկայացնելուն անպայման նախորդել է գիտական որոշակի աշխատանք: Ասվածը հիմնավորելու համար ներկայացնենք 626 թվահամարն ունեցող զուգաբանությունը:

626. Սահմանական եղանակի ներկա ժամանակի դրսևորումը՝

1. անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով /գրում եմ, գրելիս եմ, նստման ամ/:
2. հին հայերենի ներկայի ձևերով /գրեմ, կարդամ/
3. հին հայերենի ներկայի ձևերի և բառ-մասնիկի զուգորդմամբ՝

ա/ կու, կա, կը, գու, գա, գը /կա գրեմ, գրեմ կը/

բ/ ահա, հայ, ա, ը…/հայ պանիմ, գարթամ ա.../

գրում եմ	գրում ենք	մնում եմ	մնում ենք
գրում ես	գրում եք	մնում ես	մնում եք
գրում է	գրում են	մնում է մնում են /Ծրագիր, էջ 97/	

Ինչպես նկատելի է, այս զուգաբանության դեպքում ամփոփվել են այն բոլոր կազմությունները, որոնք տարբեր խոսվածքներում գործածվում են սահմանական եղանակի ներկա ժամանակի իմաստով, այսինքն՝ կատարված է տվյալ հատկանիշի գիտական դասակարգում, որը օգնում է բարբառագետ-մասնագետին ավելի հեշտ և հստակ կողմորոշվել հսկայածավալ նյութի վրա աշխատելիս: Այս զուգաբանությունը մշակելիս տարբեր վայրերից հավաքված նյութը նախ կխմբավորվի ըստ դերբայով, եղանականիշ մասնիկով կամ գրաբարածև կազմություններով ներկա ժամանակը կազելու հատկանիշի, որից հետո դերբայականզմ ձևերը կբաժանվեն 3 ըստ զուգաբանության մեջ տրված տարբերակների, իսկ մասնիկավոր ձևերը՝ 2 ենթախմբերի: Հիշյալ երեք մեծ խմբերը համակարգչայնացման փուլում կարտահայտվեն տարբեր թվերով կամ տառերով, իսկ նրանց ենթախմբերը՝ այդ տառերի կամ թվերի փոփոխված տարբերակներով՝ 1.1, 1.2, 1,3 և այլն: Դրանք հետագայում քարտեզի վրա կփոխարինվեն պայմանական նշաններով:

Հավելենք, որ սա համակարգչայնացման ամենակարևոր փուլն է, քանի որ սրանով է պայմանավորված բարբառային զուգաբանությունների ճշգրիտ քարտեզագրումը:

Կարևոր է նաև համակարգչային դաշտերի ճիշտ կազմումը: Այն պետք է արտացոլի տվյալ զուգաբանության նյութն իր բոլոր ստորաբաժանումներով և պարունակի անհրաժեշտ տվյալներ այդ զուգաբանությունն ունեցող բարբառային միավորի վերաբերյալ: Այդ պատճառով էլ նախապես որոշվել է համակարգչային դաշտերի կառուցվածքը: Բայական զուգաբանությունների համար դաշտերը կազմվել են հետևյալ սկզբունքով՝ տետրի համարը նշող սյունակ, այնուհետև՝ տվյալ խոսվածքի շրջանի և գյուղի անվանումները, տվյալ հատկանիշի թվահամարը, վերջում՝ տեսակը: Վերջինս կարելի է ներկայացնել թվերով կամ տառերով: Մենք նպատակահարմար ենք գտել դրանք ներկայացնել թվերով:



Ինչպես երևում է լուսանկարից համակարգչային դաշտը կազմված է բայական մի քանի հատկանիշի համար: Վերցնենք 637 թվահամարը /տես դաշտ 1/: Ծրագրում այն ներկայացվում է հետևյալ ձևով. «Բայի դիմային վերջավորությունների նույնացում՝ ա/ անցյալի եզակի և հոգնակի առաջին դեմքում /ես գրեր եմ, մենք գրեր ենք/

բ/ հոգնակի առաջին և երկրորդ դեմքերում /մենք գրել ենք, դուք գրել եք/

գ/ անցյալի եզակի թվի բոլոր դեմքերում /ես կգրեր, դու կգրեր, նա կգրեր/

գրում էի	գրում էինք	գրում ենք	գրում եք	խմում էի
գրեցի	գրեցինք	գրելու ենք	գրելու եք	խմում էիր
գրել էի	գրել էինք	կգրենք կգրեք	խմում էր	
գրեի	գրեինք			

Ինչպես երևում է, այս զուգաբանության համար առանձնացված են 3 խմբեր, որոնցից յուրաքանչյուրը կներկայացվի որևէ թվահամարով, այսպես՝ ա կետի հատկանիշը կունենա 1, բ-ն՝ 2 և գ-ն՝ 3 թվահամարները:

Ծրագրի այս, ինչպես և մյուս դասակարգումները վերջնական չեն, և բարբառային նյութի մշակման ընթացքում հնարավոր է նոր խմբերի առանձնացում: Վերոբերյալ զուգաբանության համար, օրինակ, առանձնացվել են նաև հետևյալ խմբերը՝

դ/ եզակի և հոգնակի 1-ին դեմքում, ինչպես նաև եզակի 2-րդ և 3-րդ դեմքերում /ես կգրէնք, մենք կգրէնք, ինչպես նաև՝ դու կըգրէր, նա կըգրէր/

ե/ եզակի 2-րդ և 3-րդ դեմքերում, ինչպես նաև հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերում /ես գըխօսէմ, դու գըխօսէր, նա գըխօսէր, մենք գըխօսէկ, դուք գըխօսէկ, նրանք գըխօսէն/

զ/ եզակի թվի 2-րդ և 3-րդ դեմքերում և եզակի 1-ին, հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերում /ես գըխօսէկ, դու գըխօսէր, նա գըխօսէր, մենք գըխօսէնկ, դուք գըխօսէկ, նրանք գըխօսէն/:

է/ եզակի 2-րդ և 3-րդ դեմքերում /ես կըգըրէ, դու կըգըրէր, նա կըգըրէր/:

Քնականաբար նշված տարբերակներից յուրաքանչյուրը կստանա նոր թվահամար՝ համապատասխանաբար 4. 5. 6 և այլն: Հավելենք, որ սա միակ զուգաբանությունը չէ, որի դեպքում Ծրագրում նշված դասակարգումը լրացվել է նոր խմբերով:



Հետագայում այդ թվերը քարտեզների վրա կդառնան նշաններ, որոնց տարբերությամբ կտարորոշվեն տվյալ զուգաբանության տիպերը կամ տեսակները:



Բարբառային նյութի այս ձևով համակարգչայնացումը հնարավորություն է տալիս օգտվել դրանից և ստանալ ցանկացած հարցի պատասխան: Այսպես՝ ծրագիրն ունի Find հրահանգը, որի օգնությամբ կարելի է պարզել քերականական այս կամ այն հատկանիշի հետ կապված որևէ հարց, ասենք՝ տարածման սահմանները, տիպերը:



Առ այսօր մեր կողմից վերոնշյալ սկզբունքով համակարգչայնված են 460 բարբառային միավորների բայական զուգաբանությունները, որոնք ծրագրում 612-662 համարներն են ընդգրկում:

Կարևոր ենք համարում նշել, որ բարբառային նյութի համակարգչայնացման աշխատանքները նախաձեռնելիս մեզ օգնություն է ցույց տրվել Լեյդենի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Յ. Վայտենբերգը: Նրա օժանդակությամբ ենք ուսումնասիրել File Maker ծրագիրը, մշակել բարբառային նյութի համակարգչայնացման սկզբունքները:

Բարբառային նյութը, նրա մշակումը, հետագայում նաև քարտեզագրումը կարևորվում է տվյալների բազմազանությամբ, բարբառ - գրական եզր դրսևորումների յուրօրինակությամբ, նաև կորստյան վտանգի առջև կանգնած արևմտահայ բարբառների գոնե պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային հսկայածավալ նյութը անդառնալի կորստից փրկելու փաստով:

Նոր տվյալների օգնությամբ կճշտվեն բարբառային միավորների փոխհարաբերությունները, հայերենի բարբառների դասակարգման սկզբունքները, կբացահայտվեն բարբառային կարևոր հատկանիշների ընդհանրություններն ու տարբերությունները: Գիտական շրջանառության մեջ կդրվեն նոր տվյալներ, եզակի փաստեր, որոնք կնպաստեն հայերենի բարբառների ուսումնասիրությանը, հնարավորություն կտան պարզելու բարբառախոս վայրերի պատմական ընդհանրությունները, ավելի ստույգ ու ճշգրիտ մեկնաբանելու լեզվական փոխազդեցությունները:

Լեզվաբանական նշանակությունից բացի՝ բարբառային նյութը ունի նաև պատմական և մշակութային արժեք: Նրա օգնությամբ հնարավոր կլինի լուսաբանել ոչ միայն բանասիրական, լեզվաբանական, այլև պատմագիտական, ազգագրական և բազմաթիվ այլ հարցեր:

Ստորև որպես հավելված բերվում է այն բարբառային միավորների բնակավայրերի ցանկը, որոնց տվյալները համակարգչայնացվել են: Բնակավայրերը բերվում են համաձայն ՀՀԳԱԱ լեզվի ինստիտուտում Հայերենի բարբառագիտական ատլասի հավաքման ծրագրով կուտակված նյութերի՛ ըստ վարչական բաժանումների: Բնակավայրից հետո փակագծում տրվում է վարչական շրջանը կամ գավառը: Արևմտահայ տարածքի բնակավայրերի համար նկատի է առնվում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի վարչաշխարհագրական այն բաժանումը, որն ունեցել են վերոնշյալ հատվածում տեղակայված գավառներն ու բնակավայրերը:

Քեսաբ
Տիգրանակերտ
Շապին Գարահիսար
Ակն
Երզնկա
Խարբերդ
Վան
Դիադին
Փարպի /Աշտարակ/
Արփի /Սասուն/
Ներքին Խաթունարխ /Էջմիածին/
Ռամիս /Նախիջևան/
Փառակա /Նախիջևան/
Ազա /Նախիջևան/
Խանաբադ /Ղարաբաղ,
Ստեփանակերտ/
Ենգիջա /Եղեգնաձոր/
Շատախ
Գոպալ /Տարոն, Խնուս/
Արտաշատ
Օշական /Աշտարակ/
Կարճևան /Մեղրի/
Ագուլիս
Երևան /կենտրոն/
Դաշբուլաղ /Ղարաբաղ,
Ստեփանակերտ/
Ազնաբերդ /Նախիջևան/
Թուսկուլու /Վարդենիս/
Ջուղա, Ծղալթբիլա /Ախալցխա/
Չմշկածագ
Փալդրվան /Կարս/
Մամռտանց /Մոկս/
Սպիտակ
Շահումյան /Դաշքեսան/
Կրխու /Սասուն, Մոտկան/
Փիջունք /Բիջունք/ /Խութ/
Սկրագոմ /Մուշ/
Զանգի /Ապարան/
Սելիքգյուղ, Հարթավան, Արագած,
Արայի /Ապարան/
Ապարան
Ճենիկ /Համշեն/
Հավարիկ
Գորիս
Կոփ /Մուշ, Բուլանուխ/
Ղզըլղոչ, Ճըջըխլար /Կարս/
Մուղնի /Աշտարակ/
Գոպալ /Տարոն, Խնուս/
Քիշմիշբափա /Իրան/
Բանանց /Դաշքեսան/
Լեռնապար /Արագած/
Վաղուհաս /Ղարաբաղ/
Ծաղկավան /Իջևան/
Կարմիր /Բայազետ/
Մասիս /Արտաշատ/
Տոսու, Վերին Հուրուք /Սպարկերտ/
Ղալայչի, Արագած, Ատմա
/Ապարան/
Ընգուզնակ, Սաղդուս /Սասուն/
Ջորաղբյուր /Աբովյան/
Խաչան /Բերկրի/
Սիփան /Արծկե/
Հադրութ /Ղարաբաղ/
Մալաթիա
Վերին Հոռաթաղ / Ղարաբաղ,
Մարտակերտ/
Սեյսուլան / Ղարաբաղ,
Մարտակերտ/
Խոժոռնի /Վրաստան, Մառնեուլ/
Խանլար /Աղբրեջան/
Սառնաղբյուր /Անի/
Մուժումբար /Իրան/
Բուղաշեն /Ախալքալաք/
Մեծ Շեն / Ղարաբաղ,
Մարտակերտ/
Հին Ջուղա /Նախիջևան/
Նավուր /Շամշադին/
Վարդաբլուր /Ստեփանավան/
Վաչիան /Ախալքալաք/
Սեյրավար /Խոյ/
Այնթափ /Մասիս/
Գյումուր /Նախիջևան/
Ղասմաշեն /Քեյվան/
Թաղվու /Խութ/
Դիլիֆ /Բոգդանովկա/
Քխսաս /Բիթլիս/
Ախալքալաք
Տանակերտ /Նախիջևան/
Սամսոն /Համշեն/
Քարաղաշտ /Վան, Ոստան/
Բլուր /Սուրմալու/
Ուլյա Նորաշեն, Շարուրի
/Նախիջևան/
Բադամլու, Հորս /Եղեգնաձոր/
Ռոդոսթո
Խաչ /Էրզրում/
Քոփ /Սասուն/
Բազմաշեն /Խարբերդ/
Կտրած քար /Արճեշ/
Արարատ /Արարատ/
Փոգա /Բոգդանովկա/
Իրցանք /Սասուն/
Ջրվեժ
Գետահովիտ /Իջևան/
Գոմս /Վան, Թիմար/
Արճակ /Վան/
Պռոշնենց /Բիթլիս, Խիզան/
Բժգներդ /Աղբակ/
Դռնաշեն /Վան, Թիմար/
Հադգոն /Մուշ/
Հասպստան /Աղբակ/
Քյօչանի /Վան, Թիմար/
Հօրմօրուր /Վան/
Դերըկ /Բիթլիս, Սղերդ/
Ջենիս /Վան, Խոշաբ/
Բուզլուխ /Շահումյան/
Վանք /Վան, Աղբակ/
Գործոթ/ Վան, Բերկրի/
Սխկյա, Մխկներ /Վան/
Մարզիյան /Իրան,Գափլա/
Ղավրավա /Իրան, Ներքին
Բուրվարի/
Սևան, Ջարանց /Վան, Արճակ/
Նամագերդ /Իրան, Փերիա/
Սնձնուտ /Մուշ/
Լիմ /Վան, Արճակ/
Չիգյան /Իրան, Փերիա/
Ույքիլիսա /Ալաշկերտ/
Հուռթուկ /Վան, Խոշաբ/
Հնդստան /Վան, Խոշաբ/
Կիրովաբադ
Ճանիկ /Համշեն/
Մարաշ
Հացիկ /Մուշ/
Ներքին և Վերին Խոտանան
/Ղափան/
Ջիարեթ /Մուշ/
Թաղիաբադ /Իրան, Միանդաբ/
Նոր գեղ /Վան, Հայոց ձոր/
Արևշատ /Արտաշատ/
Դաջան /Իրան, Փերիա/
Վերին Խոգյան /Իրան, Փերիա/
Աբուլ /Ախալքալաք/
Մշկեղ /Սասուն, Փսանք/
Բոլորմակ /Վան, Արճեշ/
Ազնավուլ /Իրան, Փերիա/
Ղարաքյարիս /Իրան, Փոքր
Բուրվարի/
Բոլորան /Իրան, Փերիա/
Տուսու /Բիթլիս, Սպարկերտ/
Հաջիաբադ /Իրան, Սուլթանաբադ/
Վարդխաղ /Մուշ/
Հարդիֆ /Էրզրում, Քղի/
Ջարա /Մեբաստիա/
Վինան /Ղարադաղ/
Մարաղա

Հարությունագոմեր /Ղարաբաղ/
Կոճողոտ /Ղարաբաղ/
Ծաղկաշեն /Ապարան/
Չիբուխլու /Համշեն, Օրդու/
Խանագահ /Իրան, Ղարադաղ/
Մարդակերտ /Ղարաբաղ/
Հառեն, Արջրա /Արծկե/
Առնջկուլա /Արծկե/
Իշխանաձոր /Սասուն/
Ծայծակ /Արճեշ/
Միջին թաղ /Խոտրջուր/
Վարդենիս /Ապարան/
Օհանավան /Աշտարակ/
Գելիգուզան /Սասուն/
Վերին Ճամբարակ /Կրասնոսելսկ/
Մուժումբար /Թավրիզ/
Ղափան
Հախվերիս /Իգդիր/
Շեն /խութ/
Թաղավանք /Խութ/
Էգնախոջա /Մանազկերտ/
Բյուրական /Աշտարակ/
Ուրգութուն /Ղարադաղ/
Արագած /Էջմիածին/
Անտառուտ /Աշտարակ/
Բաղնոս /Մանազկերտ/
Ղաբուռ /Վրաստան, Ճալկա/
Քասախ /Ապարան/
Աչաջուր /Իջևան/
Արծափ /Կոգովիտ/
Նորք /Երևան/
Մամզարա /Բոգդանովկա/
Սեբաստիա
Սևերեկ
Կոշ /Աշտարակ/
Եմիշճան /Ղարաբաղ, Մարտունի/
Չովդար /Դաշքեսան/
Եղվարդ
Մարտունի /Շամքոր/
Փարադաշ /Նախիջևան/
Օրջոնիկիձե /Կրասնոսելսկ/
Տումի /Ղարաբաղ, Հադրութ/
Հին Բաշքենդ /Կրասնոսելսկ/
Օրջոնիկիձե /Շամքոր/
Հաջըն
Քյալղապա/Համշեն, Օրդու/
Գյումրի
Սիրբար /Մուշ/
Գետք /Ախուրյան/
Կոթի /Նոյեմբերյան/
Տրապիզոն
Սարդու /Ղարադաղ/
Քարահունջ /Գորիս/
Խնածախ /Գորիս/
Խնձորեսկ /Գորիս/
Վերիշեն, Բռուն /Գորիս/
Կորնիձոր /Գորիս/
Վերին կարմիր աղբյուր
/Շամշադին/
Թալիշ /Ղարաբաղ, Մարտակերտ/
Կազի /Ալաշկերտ/
Բանթաղ /Ալաշկերտ/
Ջեյթուն
Եկմալ, Լաթար /Մուշ/
Ազատավան /Արտաշատ/
Սառնաղբյուր /Անի/
Ծովազարդ /Քայազետ/
Լճաշեն /Սևան/
Բուրաստան /Արտաշատ/
Գառնի
Ղզլչախչախ /Կարս/
Գետաշեն /Խանլար/
Իքի Աղաջ /Ուրմիա/
Տեղեր /Աշտարակ/
Շուռուտ /Նախիջևան/
Սվջող /Խարբերդ/
Կյաղ /Գալ/ /Նախիջևան/
Բիստ /Նախիջևան/
Հադան /Իրան, Փերիա/
Չղդրան /Ղարաբաղ, Մարտակերտ/
Հասանղայա-Մարալյան սարով
/Ղարաբաղ, Մարտակերտ/
Չափար /Ղարաբաղ, Մարտակերտ/
Մեհտիշեն /Ասկերան/
Հայադի /Ղարաբաղ, Մարտակերտ/
Ղազարահող /Ղարաբաղ/
Պողոսագոմեր /Ղարաբաղ/
Ճարտար /Ղարաբաղ/
Ջագլիկ /Ղարաբաղ/
Հաթերք /Ղարաբաղ/
Մարաղա /Ղարաբաղ/
Մսրվանիս /Նախիջևան/
Կաթնաղբյուր /Աբովյան/
Քանաքեռ
Խոսրովավան, Իշխու Բասեն/
Հազարեն /Վան/
Շուրիշկան /Փերիա/
Մեծ Սամսար /Ախալքալաք/
Աստապատ /Նախիջևան/
Առինջ /Աբովյան/
Շահումյան /Վրաստան/
Էլար /Աբովյան/
Պտղնի /Աբովյան/
Լիճք /Մարտունի/
Հիթինք /Սասուն/
Միլակերտ /Փերիա/
Բերկրի /Վան/
Կողք /Իգդիր/
Առաջածոր /Ղարաբաղ,
Մարտակերտ/
Ջանյաթաղ /Ղարաբաղ,
Մարտակերտ/
Մադաղիս /Ղարաբաղ,
Մարտակերտ/
Ղազանչի /Ղարաբաղ,
Մարտակերտ/
Քոլատակ, Թբղլվի, Գառնաքար
/Ղարաբաղ, Մարտակերտ/
Տռնաշեն, Սողոմոնագոմեր, Գետի
գոմեր, Դաստակերտ /Ղարաբաղ,
Մարտակերտ/
Մադինա /Ալաշկերտ/
Ունիե Բալղուղ /Համշեն/
Մրգաշատ /Հոկտեմբերյան/
Կարբի /Աշտարակ/
Լիզ /Մուշ, Բուլանուխ/
Խոսպ /Վան, Հայոց ձոր/
Արտամետ /Վան/
Մերաբադ /Իրան, Դովլաթաբադ/
Սանգիբարան /Իրան, Փերիա/
Ազնա, Քալլավա /Իրան, Քյազազ/
Գուլիզարդ /Իրան, Քյազազ/
Կարակըզի, Բադիլբոյ /Խոյ/
Գետազատ /Արտաշատ/
Փայաջուկ /Խոյ/
Խեք /Վան/
Արծափ /Կոգովիտ/
Ալիջան /Սուրմալու/
Խարիդ /Խիզան/
Հովտամեջ /Էջմիածին/
Առատաշեն /Էջմիածին/
Հազարջիրիք /իրան, Փերիա/
Բոլդաջի /Իրան, Չալմահալ/
Աղբուլաղ /Իրան, Չալմահալ/
Վերին քրդեր /Իրան, Քյարվանդ/
Դեյնով /Իրան, Վերին Բուրվարի/
Յաղափլու /Վարդաշեն/
Ռստամ-Գեդուկ /Մանազկերտ/
Կոճերեր /Արծկե/
Մցու /Բիթլիս, Մոտկան/
Նիչ /Բիթլիս, Մոտկան/
Աղավնատուն, Հայթաղ /Էջմիածին/
Ծաղկալանջ /Էջմիածին/
Ամբերդ, Դոդս /Էջմիածին/
Ծաղկունք, Շահումյան /Էջմիածին/
Նիգավան /Ապարան/
Քուչակ /Ապարան/
Քարագլուխ /Ղարաբաղ, Հադրութ/
Ղարաղշլաղ /Շուշի/
Բեժանո /Ախալքալաք/
Չինչին /Շամշադին/
Եխնաթափա /Ալաշկերտ/
Դամիա /Վրաստան, Մառնեուլ/
Տադվերան /Բասեն/
Դաշբուռուն /Սուրմալու/
Ասլանբեկ
Շեն /Բիթլիս, Հիզան/
Նուխի
Աթարբեկյան /Էջմիածին/
Մրցանք /Բիթլիս, Մոտկան/
Վարդենիս /Մուշ/
Մոլալու /Մարտունի/
Գյարմավ /Շատախ/
Կոռ /Բիթլիս, Մոտկան/
Ջուջան /Դիադին/
Կաղզվան /Կարս/
Մոլլաղամար /Սուրմալու/
408 Շերվանշեխ /Մուշ, Բուլանուխ/
Կողակ /Մուշ, Բուլանուխ/
Օրմոնքոյ /Համշեն, Ճենիկ/
Նուխի
Չլկանի /Ալաշկերտ/
Ղազուկլաղ /Սուրմալու/
Ծպնի /Կարս/
Բուլանուխ /Կարս/
Լղարակ /Շամխոր/
Սաղյան /Շամախի/
Խորզենդ /Իրան, Վերին Բուրվարի/
Ղարղուն /Իրան, Փերիա/
Փանիկ /Սուրմալու/
Վելի Բաբա /Բասեն/
Խարկեն /Արճեշ/

Տաթև, Սևարանց /Գորիս/
Եղեսիա
Գարմունջ /Եղեսիա/
Ուզ /Սիսիան/
Գնիշիկ /Եղեգնաձոր/
Աղավնաձոր /Եղեգնաձոր/
Ծոկու /Կարկառ/
Հազզո /Սասուն/
Օլավերդ /Ախալքալաք/
Հոսներ /Սասուն/
Գանձա /Բոգդանովկա/
Խոտ /Գորիս/
Վաղատուր /Գորիս/
Շինուհայր /Գորիս/
Բասեն /Գոմաձոր/
Հին Թաղլար / Ղարաբաղ, Հադրութ/
Թազագյուղ /Մարտունի/
Շնող /Թումանյան/
Նյուզգեր /Շամխոր/
Երևանի մայլա /Բյուրական/
Արաբկիր
Ծաղկիս /Կարին/
Սանահին /Թումանյան/
Դսեղ /Թումանյան/
Թեղուտ /Թումանյան/
Շամուտ /Թումանյան/
Ճոճկան /Թումանյան/
Հաղբատ /Թումանյան/
Բարսում /Շամքոր/
Դուգնուգ /Մուշ/
Վերնաշեն /Եղեգնաձոր/
Ղզլքիլիսա /Ծալկա/
Նորս /Նախիջևան/
Ջովունի /Ապարան/
Թազաղենդ /Ղարադաղ/
Խանիշեն /Շամախի/
Մաղրասա /Շամախի/
Ցղնա /Նախիջևան/
Արփա /Եղեգնաձոր
Աշտարակ
Շամիրամ /Քաղեշ/
Ալիճագրակ /Բասեն/
Եղեգիս /Եղեգնաձոր/
Մարմետ /Վան, Թիմար/
Քոշկ /Էրզրում, Այնթափ/
Դարման, Ծվստան /Վան/
Չոլախլու /Կարս/
Արմտլու /Բասեն/
Մազրա /Ալաշկերտ
Ուզունքիլիսա /Կարս/
Կողպանց /Վան/
Շուշանց /Վան/
Կյուսենց /Վան/
Լեսկ /Վան/
Չանախչի /Արարատ/
Արամուս /Աբովյան/
Ավրակ /Վան/
Զառ /Աբովյան/
Ակունք /Աբովյան/
Մառնիկ /Սասուն/
Գեղաշեն /Աբովյան/
Կապուտան /Աբովյան/
Խավենց /Վան/
Շատախ /Տղացպար/
Գյաբոլներ /Մուշ, Բուլանուխ/
Խտրբեկ /Սվեդիա/
Կամարիս /Աբովյան/
Բերդ /Շամշադին/
Խասկալ /Նիկոմեդիա/
Պարտիզակ
Քյուրագդարա /Կարս/
Հալնճի /Բիթլիս/
Հաղին /Մոկս/
Խալենց /Մոկս/
Կճավ /Մոկս/
Հարպերտ /Գավաշ/
Կուրթան /Ստեփանավան/
Յօնջալու, Իրիցու /Ալաշկերտ/
Յոնջալու /Մուշ, Բուլանուխ/
Խուռնավուլ /Սեբաստիա/
Ֆուռնոս Ուլնիա /Զեյթուն/
Ապարանց, Սեղ /Մոկս/
Քռեր /Վան, Խոշաբ/
Կոմք /Սասուն
Բալահովիտ /Աբովյան/
Սրվտրկի /Շատախ/
Կվերս /Շատախ/
Ավան /Աբովյան/
Հաբուսի /Խարբերդ/
Արմաշ /Նիկոմեդիա/
Մանդան /Արճակ/
Ադափազար /Նիկոմեդիա/
Կյաղ /Նախիջևան/
Ալյուր /Վան/
Արմշատ /Շատախ/
Էվջիլար /Սուրմալու/
Ոտնչոր /Մուշ, Բուլանուխ/
Բոստաբյանդ /Մուշ/
Դուման /Խնուս/
Նոր շեն /Ղարաբաղ, Մարտունի/
Մարգարա /Հոկտեմբերյան/
Թոխաթ /Եվդոկիա/
Գյուրջի /Իրան, Գափլա/
Նալբանդյան /Հոկտեմբերյան/
Ջորագլուխ /Ապարան/
Կուլաբ /Սուրմալու/
Նալբանդ /Սպիտակ/
Տոլորս /Սիսիան/
Մուսուն /Բայազետ/
Գյուզակ /Վան, Բերկրի/
Բոլնիս-Խաչեն /Բոլնիս/
Կաղարծի /Ղարաբաղ, Մարտունի/
Շահնազար /Կալինինո/
Սինագան /Չալմահալ/
Լիվասյան, Աղբուլաղ /Իրան, Չալմահալ/
Խաբլջող /Սասուն/
Տնգետ /Սասուն/
Նախիջևան
Արծվիկ /Սասուն/
Ծղնակ /Մուշ/
Ռաբաթ /Սասուն/
Ակունք /Թալին/
Սեմալ /Սասուն/
Խան /Սասուն, Փսանք/
Նաջարան /Բալու/
Խաստուր /Ալաշկերտ/
Նախիջևան /Կարս/
Կարծախ /Ախալքալաք/
Փիան /Մուշ, Բուլանուխ/
Մանջալիկ /Սեբաստիա/
Դենդիլ /Սեբաստիա/
Բեյլան /Անտիոք/
Մավրակ /Կարս/
Թալին
Նալբանդյան /Հոկտեմբերյան/
Կարմրաշեն /Թալին/
Խրմանջուղ /Ղարաբաղ/

Նարինե Հեքեքյան
Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

ՏԱՌԱՅԻՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԿՈՐՊՈՒՍՈՒՄ

Հապավումները, իբրև բառակազմական յուրահատուկ գործընթացի արդյունք, լեզվական անժխտելի իրողություն են և արդի լեզուների, նաև գրական արևելահայերենի բառապաշարի ուրույն ու բավականաչափ հարուստ շերտը: Ներկայումս սա լեզվի բառային կազմի թերևս ամենից արագ փոփոխվող ու համալրվող շերտն է: Բառակազմության այս տեսակի ծավալվումը թելադրված է կյանքի մերօրյա ռիթմով և տնտեսման սկզբունքով: Մի կողմից հասարակական-քաղաքական, տնտեսական, գիտական ու մշակութային կյանքում տեղի ունեցող անընդհատ փոփոխություններին արձագանքելու, միաժամանակ բառային հնարավորինս կարճ միավորներ ստեղծելու լեզվական անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ նյութի, տեղի, գրողի կամ խոսողի ժամանակի, ինչու չէ՝ նաև ջանքերի խնայողությունը այն գործոններն են, որոնք խթանում են հապավման, իբրև բառակազմական եղանակի, աշխուժացումը մեր օրերում: Սրանում պակաս կարևոր չէ նաև հապավումների ստեղծման ու գործածության ոլորտը. դրանք մեծապես գործածվում են զանգվածային լրատվության միջոցներում (պարբերական մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, ինտերնետ), որոնք տեղեկատվական մեր դարաշրջանի շարժիչ ուժն են, վարչական ու գիտական խոսքում (ներպետական և միջպետական փաստաթղթեր, պաշտոնական գրագրություն, գիտական ուսումնասիրություններ և այլն), և խոսքի հենց այս տեսակներն են այսօր ամենից շատ գրվողն ու ընթերցվողը: Բավական է նշել, որ վերջին տասնամյակի ընթացքում հարյուրավոր նորաստեղծ հապավումներ բառացիորեն ողողել են պարբերական մամուլի, տեղեկատու գրականության էջերը: Ու թեև հապավումների, մասնավորապես տառային հապավումների այսչափ ծավալումը խրախուսելի երևույթ չէ, սակայն փաստ է, որը չի կարելի անտեսել: Հապավումների հավաքումը և ուսումնասիրությունն անհրաժեշտ ու կարևոր են ոչ միայն լեզվաբանական, այլ նաև պատմական ու մշակութաբանական տեսանկյունից, քանի որ դրանք արտացոլում են պատմական որոշակի ժամանակաշրջանում երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական, տնտեսական զարգացումները, գիտության, կրթության, մշակույթի վիճակը և այլն: Ուստի գիտական և գործնական արժեք ունի հապավումների ներկայացման խնդիրը ինչպես բառարաններում, այնպես էլ արևելահայերենի կորպուսում:

Հայերենի բացատրական և ուղղագրական բառարաններում[1] հիմնականում ընդգրկված են մասային և մասաբառային հապավումներ (օրինակ՝ *գիմկոմհասարիպ, ուսմասվար, դասվար, կոլտնտեսություն, բաներիպղպրոց, կենտկոմ, կուսթեկնածու* և այլն), իսկ տառային հապավումները ներկայացված են եզակի նմուշներով, ինչպես՝ *բուհ, ևէպ, զագս, գէս* (ՀԷԿ-ի փոխառյալ տարբերակն

[1] Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Եր., 1969-1980, Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հհ. 1-2, Եր., 1976, Հ.Բարսեղյան, Հայերենի ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., 1973:

է)[2], որոնք լեզվաբանական գրականության մեջ գործածվում են իբրև հասարակ գոյականի արժեք ստացած հապավումների դասական օրինակներ[3]:

Տառային հապավումներն իրենց յուրահատուկ կազմությամբ առանձնանում են հապավումների շարքում: Նրանք որոշակիորեն տարբերվում են հապավումների մյուս տեսակներից, որոնք կառուցվածքով նման են բաղադրյալ բառերին, իմաստային տեսակետից համեմատաբար ավելի դյուրընկալելի են և թեքման հարացույցում դրսևորում են նույն օրինաչափությունները, ինչ բաղադրյալ բառերը (օր՝. *ուսմասվար* -ներ, -ի, *զինկոմիսարիատ* -ներ, -ի): Բացի այդ, տառային հապավումներն իրենց գերակշիռ մասով հատուկ անունների արժեք ունեն, մինչդեռ հապավման մյուս տեսակները մեծ մասամբ հասարակ գոյականներ են: Թերևս այս վերջին հանգամանքով է պայմանավորված այն իրողությունը, որ հիշյալ բառարաններում մասային և մասաբառային հապավումներին ավելի շատ տեղ է հատկացված, քան տառայիններին:

Անժխտելի է, որ տառային հապավումները, որոնք գլխավորապես գոյականի արժեքով բաղադրյալ խիստ յուրահատուկ կազմություններ են, պետք է արտացոլվեն բառարաններում: Այլ հարց է՝ ի՛նչ չափով և ինչպե՛ս: Տառային հապավումների ընդգրկման ծավալի խնդիրը պայմանավորված է նախ լեզվական այդ միավորների նկատմամբ ունեցած մոտեցումներով, ապա նաև հապավումների ընտրության սկզբունքներով ու չափանիշներով:

Թերևս ճիշտ է ընդհանուր բառարանների մեջ այն տառային հապավումների ընդգրկումը, որոնք հասարակ գոյականների (հազվադեպ՝ ածականների) արժեք ունեն և առավել տարածված են ու կայունացած, ինչպես, ասենք՝ *ԱՀԿ* (ավտոմատ հեռախոսակայան), *ՀԷԿ* (հիդրոէլեկտրակայան), *ՋԷԿ* (ջերմային էլեկտրակայան), *ԱԷԿ* (ատոմային էլեկտրակայան), *ճՏՊ* (ճանապարհատրանսպորտային պատահար), օգգ (օգտակար գործողության գործակից), *ՔՊ* (քաղաքացիական պաշտպանություն), *ՏՏ* (տեղեկատվական տեխնոլոգիաներ), *ՀԻԱՀ* (ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ), *ՌՕ* (ռազմածովային) և այլն, ինչու չէ՝ նաև առավել գործածական մասնագիտական որոշ հապավումներ՝ համապատասխան նշումով, ինչպես՝ *ՀՆԱ* (համախառն ներքին արդյունք), ՖԱԴ (ֆիզիկաաշխարհագրական դիրք) և այլն:

Սակայն բնական է, որ նույնիսկ նման մոտեցման դեպքում հայերենի հապավումների մի զգալի շերտ մնում է չներկայացված: Ակնհայտ է, որ այս բացը լավագույնս լրացվում է հապավումների բառարաններով: Խորհրդային շրջանում մեզանում եղել է հապավումների մեկ բառարան՝ Ալ.Մարգարյանի հեղինակած բառարանը[4], որի մեջ ընդգրկված են այդ ժամանակաշրջանի իրականության անվանող 4000 հապավումներ, որոնցից միայն 470-նն են տառային:

Հայաստանում անկախության հռչակումից հետո պետական, հասարակական-քաղաքական կյանքում, միջազգային հարաբերություններում տեղի ունեցած խոշոր տեղաշարժերի հետևանքով կրկին աշխուժացում նկատվեց բառապաշարի այս շերտում, ստեղծվեցին հարյուրավոր նոր տառային հապավումներ, կատարվեցին

[2] Նշենք, որ չնայած հիշյալ օրինակների բառարանային արձանագրմանը, դրանց նկատմամբ վերաբերմունքի հարցում միասնականություն չկա: Օր.՝ *զագս*-ը նշված ուղղագրական բառարանում ներկայացված է իբրև հապավում, իսկ բացատրականներում՝ ոչ, *դասվար*-ը Էդ.Աղայանի բացատրական բառարանում ներկայացված է որպես հապավում, ուղղագրական և ակադեմիական բացատրական բառարաններում՝ ոչ և այլն:

[3] Էդ.Աղայանի բացատրական բառարանում տեղ է գտել նաև *կենկրտում* հապավման՝ խոսակցական լեզվում ժամանակին գործածվող *ցեկա* (ռուս. ЦК) օտար համարժեքը՝ առանց որևէ նշումի:

[4] Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի հապավումների բառարան, Եր., 1979:

փոխառություններ: Միայն մի քանի տարվա ընթացքում պարբերական մամուլի էջերում ստեղծված ու գործածված տառային հապավումները բավականաչափ նյութ ընձեռեցին առանձին բառարան-տեղեկատուի[5] (շուրջ 1300 միավոր) համար, որի լույսընծայումից հետո ընդամենը 6-7 տարվա ընթացքում հապավումների թիվը առնվազն կիսով չափ ավելացավ, և տառային հապավումների մի նոր բառարանի[6] (շուրջ 2000 միավոր) ստեղծման կարիք զգացվեց: Սակայն մի բան ակնհայտ է. այսօր տառային հապավումների շերտում փոփոխություններն այնքան արագ են տեղի ունենում, որ տպագիր բառարանն իր լույսընծայումից կարճ ժամանակ անց արդեն «հնացած» կարող է համարվել:

Ժամանակակից տեխնոլոգիաներն այս իմաստով ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում. էլեկտրոնային բառարաններն օգտագործման համար ավելի հարմար են, կարող են ավելի արագ արձագանքել լեզվի բառապաշարում տեղի ունեցող տեղաշարժերին, մշտապես թարմացվել և ավելի հարուստ բառամթերք, այդ թվում նաև տառային հապավումներ ընդգրկել:

Կորպուսում ևս արևելահայերենի բառապաշարն իր բոլոր շերտերով, այդ թվում և տառային հապավումներով պետք է հնարավորինս լիակատար արտացոլվի: Դրա հետ կապված՝ որոշ խնդիրներ են առաջ գալիս, որոնց կփորձենք անդրադառնալ մեր հետագա շարադրանքում:

1. **Ո՛ր հապավումները և ի՛նչ ծավալով պետք է ներկայացվեն կորպուսում**

Քանի որ կորպուսում լեզվի բառապաշարը պետք է ներկայացվի հնարավորինս ամբողջական ձևով և իր բոլոր շերտերով, ուրեմն տառային հապավումներն էլ նրանում պետք է իրենց համապատասխան արտացոլումը գտնեն: Կարծում ենք՝ դրանք կարելի է ներկայացնել հետևյալ շերտերով (իհարկե, տարբեր համամասնությամբ).

ա) *համագործածական հապավումներ*

Սրանք տարբեր ոլորտներին բնորոշ, ակտիվ գործածություն ունեցող հապավումներն են, որոնք հանդիպում են մամուլի էջերում, գրքերում, ազդագրերում, ցուցանակներում, անգամ պիտակների վրա և թե՛ հատուկ, թե՛ հասարակ անունների արժեք ունեն:

Բնական է, որ տառային այս հապավումները կորպուսում ամենամեծ թիվը պետք է կազմեն:

բ) *տերմինային տարբեր համակարգերի առավել տարածված հապավումներ*

Այս դեպքում նկատի չունենք համընդհանուր գործածություն ստացած և այդ պատճառով նեղ մասնագիտական արժեքը կորցրած այնպիսի հապավումներ, ինչպիսիք են, ասենք, *ԱԱՀ, ՃԻԱՀ, ՄԻԱՎ, ԴՆԹ, ՌՃՈՒ, ՌՕՈՒ* և այլն: Խոսքը վերաբերում է տնտեսագիտական (*ՀԱԱ* - համախառն ազգային արդյունք / համախառն արտաքին ակտիվներ), *ՀԱՊ* - համախառն արտաքին պարտավորություններ, *ՀՓԻ* - հատուկ փոխառության իրավունք, *ՆԱԱ* - ներքին ազգային ակտիվներ և այլն), աշխարհագրական (*ՏԱԴ* -տնտեսաաշխարհագրական դիրք, *ՔԱԴ* - քաղաքաաշխարհագրական դիրք ևն), գիտատեխնիկական (*ԳԲԹ* - գերբարձր թույլատրելիություն, *ՕՀՄ* - օպերատիվ հիշող սարք և այլն), ռազմական (*ՌՏԿ* - ռադիոտեղորոշումային կայանք, *ՌԱՏ* - ռազմական ավտոտեխնիկա, *ՋՀԿ* - զենիթահրետանային կայանք և այլն), բժշկական (*ԿԱՀ* -

[5] Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան, Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատու, Եր., 2000:
[6] Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան, Հայերենում գործածվող հապավումների բառարան, Եր., 2007:

կենսաբանորեն ակտիվ հավելումներ և այլն) տերմինների արժեք ունեցող փոքրաթիվ հապավումների:

գ) *հնացած և պատմական հապավումներ*

Այսօր կյանքի տարբեր բնագավառներում տեղի ունեցող արագ զարգացումները հաճախակի փոփոխություններ են առաջ բերում տառային հապավումների շերտում: Կյանքի թելադրանքով ակտիվ գործածությունից դուրս են գալիս որոշ հապավումներ, ստեղծվում կամ փոխառվում են նորերը: Այս շարունակական գործընթացի հետևանքով երբեմն մի քանի տարվա կյանք ունեցող հապավումները վերածվում են պատմական (օր՝. *ԽՍՀՄ/ՍՍՀՄ, ՀԽՍՀ/ՀՍՍՀ, ԲԺՀ, ԼՂԻՄ* և այլն) կամ հնացած (օր.՝ *ՀՓԸ* - Հայաստանի թատերական ընկերություն, *ՀՄԻ* - Հայկական մանկավարժական ինստիտուտ և այլն) միավորների, որոնք, ճիշտ է, ակտիվ գործածություն չունեն, սակայն արժեքավոր են նրանով, որ պատմական որոշակի իրողությունների անվանումներ են, որոշակի ժամանակաշրջանի մասին տեղեկությունների կրողներ: Ուստի սրանց ներկայացումը կորպուսում պակաս կարևոր չէ:

դ) *փոխառյալ հապավումներ*

Տառային հապավումների մեջ զգալի թիվ են կազմում փոխառյալ միավորները: Խորհրդային շրջանում դրանց զգալի մասը փոխառված կամ պատճենված էր ռուսերենից կամ նրա միջոցով՝ այլ լեզուներից, ինչպես՝ *ՄԱԳԱՏԷ, ՅՈՒՆԵՍԿՕ, ՆԱՏՕ* և այլն: Մեր օրերում օրեցօր զարգացող ու ամրապնդվող միջազգային քաղաքական, տնտեսական, մշակութային հարաբերությունների պայմաններում աշխուժացել է տառային հապավումների ուղղակի փոխառությունը նաև եվրոպական լեզուներից, ինչպես՝ *ՅՈՒՆԻԴՕ, ՏԱՍԻՄ, ՏՐԱՍԵԿԱ* և այլն: Կարծում ենք, որ տառային հապավումների այս շերտը ևս պետք է իր արժանի արտացոլումը գտնի արևելահայերենի կորպուսում:

ե) *խոսակցական ոճում գործածվող հապավումներ*

Հապավումները բնորոշ են գրավոր խոսքի առանձին ոճերի և բանավոր խոսքում գրեթե չեն գործածվում: Չնայած դրան՝ մեկ-երկու տառային հապավում ստեղծվել է հենց բանավոր խոսքում, ինչպես՝ *խծք, բոմժ* (ի դեպ, վերջինը ռուսերեն կազմություն է): Սրանք այն եզակի օրինակներից են, երբ հապավումը բանավոր խոսքից թափանցում է գրավոր խոսք: Մամուլի էջերում, ուղեցուցակներում, հայտարարություններում և այլուր, սակայն, հանդիպում են նաև հապավումներ, որոնք օտարաբանություններ լինելով՝ բնորոշ են առավելապես առօրյա խոսքին, ինչպես՝ *ԳՈՒՄ, ԺԷԿ, ԳԱԻ և այլն*: Քանի որ կորպուսում լեզուն ներկայացվում է բոլոր շերտերով, այս փոքրաթիվ հապավումները ևս պետք է ներկայացվեն նրանում:

Տառային հապավումների խոսքաշարային արձանագրումը համապատասխան բնագրային օրինակներով, անշուշտ, կարևոր է, սակայն բավարա՞ր է արդյոք: Կարծում ենք, որ դրանք միայն *հպվ.* նշումով առանձնացնելը չպետք է վերջնական քայլը լինի: Լրացուցիչ նշումները (*պատմ., հնց., մանգ., խսկց.*) կարող են շատ օգտակար լինել կորպուսից օգտվողների համար, որոնք կկարողանան հեշտորեն և ավելի ճիշտ կողմնորոշվել իրենց անհրաժեշտ բնագրային նյութի ընտրության ժամանակ:

2. **Համանունություն**

Տառային հապավումների կազմության յուրահատկությամբ է պայմանավորված նրանց մեջ համանունության առաջացումը: Քանի որ տառային հապավումներն ստեղծվում են բառակապակցության բաղադրիչների սկզբնատառերով, բնական է, որ նրանց մեջ ավելի մեծ է գրությամբ և արտասանությամբ նույնական միավորների ստեղծման հավանականությունը: Մյուս կողմից էլ դրան նպաստում է այն, որ բառակազմության այս եղանակը խիստ գործուն է, հապավումների ստեղծման գործընթացը՝ անընդհատ: Հետևաբար համանունների թիվը գնալով ավելի ու ավելի է աճում, ընդ որում դրանք միայն զույգերով չեն հանդես գալիս. նույնիսկ քառանդամ, հնգանդամ համանունական շարքեր են արձանագրված: Սա, իհարկե, խրախուսելի երևույթ չէ, քանի որ բարդացնում է տառային հապավումները հասկանալու, դրանք մեկնաբանելու առանց այն էլ դժվարին խնդիրը, սակայն իրողություն է:

Համանուն տառային հապավումները ճիշտ հասկանալու և մեկնաբանելու գործում անշուշտ մեծ դեր ունի խոսքաշարը: Նրանում գործածված առանձին բառեր կարող են հուշել, թե համանուն հապավումներից ո՛ր մեկն է գործածված տվյալ համատեքստում: Հմմտ., օրինակ, *ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամները ԱՄՆ-ին կոչ են արել մարել իր պարտքը Միավորված ազգերին (ՀՀ,*1.04.00*)* և *Նա հավատարեց, որ իբրև քաղաքական կառույց՝ ՄԱԿ համբակցությունը նախագիծը մշակելիս առաջնորդվել է իր արժեքային համակարգով....* (ՀՀ, 14.09.06): Կասկած չկա, որ առաջին դեպքում խոսքը Միավորված ազգերի կազմակերպության մասին է (*Անվտանգության խորհուրդ, Միավորված ազգեր*), իսկ երկրորդ դեպքում՝ Միավորված աշխատանքային կուսակցության (*համբակցություն*):

Սակայն դեպքեր էլ կան, երբ անգամ նախադասությունը չի կարող կողմնորոշել համանուն հապավման ճիշտ մեկնաբանության մեջ: Շփոթ կարող է առաջանալ այն դեպքում, երբ համանուն են պետությունների, քաղաքական կուսակցությունների անուն հապավումները (օրինակ՝ *ԲՀ* - Բելառուսի / Բուլղարիայի Հանրապետություն, *ԼՀ* - Լեհաստանի / Լիբանանի Հանրապետություն, *ԱԺԿ* - Ազգային / Արցախի ժողովրդավարական կուսակցություն և այլն), ինչպես նաև այնպիսի հապավումներ, որոնց հիմքում ընկած բառակապակցությունները տարբերվում մեկ բաղադրիչով (օրինակ՝ *ԿԽ* - կենտրոնական/ կառավարման խորհուրդ, *ԱՄԿ* - Առողջապահության / Աշխատանքի միջազգային կազմակերպություն, *ՀԱԸ* - Հայաստանի աստվածաշնչային ընկերություն և Հայաստանի ավետարանչական ընկերակցություն և այլն): Օր.՝ *Ինչ վերաբերում է ԱԺԿ համամասնական ցուցակին, այն արդեն պատրաստ է* (ՀԺ, 02.03.07) նախադասությունից դժվար է կռահել, թե խոսքը ո՛ր կուսակցության մասին է: Նման դեպքերում, իհարկե, ավելի ծավալուն խոսքաշար է հարկավոր:

Բացի այդ, նշենք, որ հապավումների համանունական շարքում հանդիպում են թե՛ համագործածական, թե՛ սահմանափակ գործածություն ունեցող, այսինքն՝ հնացած, պատմական, երբեմն հազվադեպ կամ դիպվածային հապավումներ, որոնք, բնականաբար, նույն հարթության վրա ներկայացվել չեն կարող:

Ուշագրավ երևույթ է նաև հապավումների և միավանկ գոյականների համանունությունը, ինչպես՝ *ԿԱՊ* (Կոլեկտիվ անվտանգության պայմանագիր), *ՀԱՄԿ* (Հայաստանի ազգային սկաուտական կազմակերպություն), *ԱԽՏ* (Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջան) և այլն:

Կարծում ենք, որ կորպուսում համանուն տառային հապավումների ներկայացման հետ կապված խնդիրները հանգում են հետևյալին. ինչպե՞ս են դրանք մատուցվելու կորպուսից օգտվողին. միայն հաջորդաբար ներկայացվող բնագրային համապատասխան օրինակներո՞վ, թե՞ նաև հարակից մեկնաբանություններով ու նշումներով:

Տառային հապավումների, հատկապես նորակազմությունների առատությունն այսօր լուրջ դժվարություններ է հարուցում այն առումով, որ դրանցից շատերը կարող են պարզապես չհասկացվել, իսկ համանունների դեպքում՝ երբեմն նաև շփոթվել: Ուստի այս կազմությունների յուրահատկությունը հաշվի առնելով՝ գուցե արժե մտածել դրանց բացված տարբերակները (համապատասխան բառակապակցությունները) որևէ կերպ ներկայացնելու մասին:

3. **Տարբերակայնություն**

Հապավումների ստեղծումն ու գործածությունն այսօր մի տեսակ հախուռն և, կարելի է ասել, երբեմն նաև կամայական բնույթ ունի: Այդ պատճառով էլ հաճախ բախվում ենք լեզվական այնպիսի երևույթի, ինչպիսին տարբերակայնությունն է: Այն դրսևորվում է հետևյալ ձևերով.

ա) *հապավումների շարադասական տարբերակներ*

Սրանք բնորոշ են առավելաբար պատճենված հապավումներին: Ստեղծվում են աղբյուր կամ միջնորդ լեզվի բառակապակցության բաղադրիչների շարադասության պահպանմամբ կամ հայերենին բնորոշ շարադասությամբ: Հմմտ., օրինակ, *ԵՎԶԲ* (Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկ) և *ՎԶԵԲ* (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ), *ՄՀՀ* (Միջազգային արժութային հիմնադրամ) - *ԱՄՀ* (Արժույթի միջազգային հիմնադրամ), *ՄՀՖ* (Մշակույթի հայկական ֆոնդ) - *ՀՄՖ* (Հայկական մշակույթի ֆոնդ) և այլն:

Սրանց մեջ կան կայունացած և չկայունացած, ընդունելի և մերժելի տարբերակներ, և դրանց նկատմամբ վերաբերմունքի դրսևորման անհրաժեշտություն է ծագում, այլապես հավասարության նշան կդրվի մերժելի և ընդունելի ձևերի միջև:

բ) *պաշտոնական և ոչ պաշտոնական հապավումներ*

Գաղտնիք չէ, որ տառային հապավումներն իրենց գերակշիռ մասով հատուկ գոյականների արժեք ունեն: Դրանք մեծ մասամբ՝

– պետությունների, նրանց պետական և կառավարման բարձրագույն և այլ մարմինների *(ՀՀ, ԼՂՀ, ՌԴ, ԱՄՆ, ՌՀ, ՎՀ, ԱԺ, ԱԳՆ, ՆԳՆ, ԱԱՆ, ԿԳՆ* և այլն),

– կուսակցությունների, կազմակերպությունների, միությունների, հիմնադրամների (*ԱԺՄ, ՀՀԿ, ՀՌԱԿ, ԵԿՄ, ՀԲԸՄ, ՀՕՖ* և այլն),

– համաշխարհային, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների (*ԵՄ, ԵԽ, ԵԱՀԿ, ՄԽՎ, ՆԱՏՕ, ՄՕԿ, ՅՈՒՆԻՍԵՖ* և այլն),

– կրթական և մշակութային օջախների (*ԵՊՀ, ՀՖՆ, ԵԴԹ, ՊՀԹ* և այլն) անվանումներ են:

Հայտնի է, որ կուսակցությունները, կազմակերպությունները, հիմնարկությունները և զանազան այլ մարմիններ գրանցվելիս իրենց լրիվ անվան հետ հաճախ ստանում են նաև պաշտոնական կրճատ անվանումը, որը ոչ այլինչ է, եթե ոչ նրա անվան հապավված տարբերակը: Սակայն շատ հաճախ հատկապես մամուլի էջերում հանդիպում են հապավումների կամայականորեն ստեղծված տարբերակներ՝

առանձին բաղադրիչների կրճատումով կամ աղավաղումով: Օրինակ՝ Երևանի պետական լեզվաբանական համալսարանը պաշտոնապես ընդունված *ԵՊԼՀ*[7] ձևին զուգահեռ ներկայացվում է նաև *ԵՊԼՀ, ԵԼՊՀ*[8] տարբերակներով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *(ՄԻԵԴ)*՝ *ԵԴ* տարբերակով, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանը *(ՀՊՃՀ)*՝ *ԵՊՃՀ* (Երևանի պետական ճարտարագիտական համալսարան) ձևով: Հմմտ. նաև *ԵՔԸՀ - ԵՔԸՀ* (Երևանի քաղաքային ընտրական հանձնաժողով), *ՀՊՏՀ* (Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) - *ԵՏՀ* (Երևանի տնտեսագիտական համալսարան) և այլն: Այս վերջին օրինակում տարբերակայնությունն առաջացել է ոչ միայն տեղայնացնող բաղադրիչի փոփոխման, այլ նաև կարգավիճակը նշող բաղադրիչի (*պետական*) բացակայության հետևանքով: Այս հիմքով տարբերվող հապավումներն էլ քիչ չեն: Հմմտ. *ԵրՄՄԳՀԻ* (Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ) - *ՄՄԳՀԻ* (Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ), *ՀԳԱԱ* (Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիա) - *ՀԳԱ* (Հայաստանի գիտությունների ակադեմիա), *ԳԱԱ* (գիտությունների ազգային ակադեմիա)[9] և այլն: Սրանք բոլորն էլ կարող են ընդունելի տարբերակներ լինել, ուստի հարց է ծագում՝ անհրաժեշտ են արդյոք փոխադարձ հղումները և ի՛նչ չափով:

գ) *հայերեն կամ համարժեք օտար բաղադրիչով տարբերակային հապավումներ*

Երբեմն հապավումների տարբերակայնությունը հետևանք է համապատասխան բառակապացության մեջ փոխառյալ բաղադրիչի կամ հայերեն համարժեքի գործածության. հմմտ, օրինակ, *ՀԹԱ* (չբացահայտված թռչող առարկա) և *ՀԹՕ* (~ օբյեկտ), *ԳՄԿ* (Գաղթականների միջազգային կազմակերպություն) և *ՄՄԿ* (Միգրացիայի ~), *ՀԱՊ* (Հավաքական անվտանգության պայմանագիր) և *ԿԱՊ* (Կոլեկտիվ ~) և այլն: Նման տարբերակների դեպքում նախապատվությունը այս կամ այն ձևին տալը դժվար է, ուստի գուցե արժե պարզապես փոխադարձ հղումներ անել:

դ) *փոխառյալ հապավումներ և դրանց հայերեն համարժեքներ*

Հայաստանի ինտեգրումը միջազգային հանրությանը մի կողմից առաջ է բերում օտարալեզու տառային հապավումների մեծ հոսք, մյուս կողմից էլ խթանում դրանց հայերեն ընդունելի տարբերակների ստեղծումն ու կիրառությունը: Միջազգային զանազան հաստատություններ անվանող հապավումները հաճախ սկզբնապես փոխառվում են, ապա ստեղծվում են դրանց հայերեն համարժեքները, և սրանք երբեմն գործածվում են տարբերակներով: Օրինակ՝ *ՕՊԵՔ* (անգլ. Organization of Petroleum Exporting Countries) – *ՆԱԵԿ* (Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն), *ԻՍՕ* (անգլ. International Standartization Organization) – *ՍՄԿ* (Ստանդարտացման միջազգային կազմակերպություն) և այլն:

Այսպիսի տարբերակների դեպքում ցանկալի է փոխադարձ հղումներ տալ *պե՛ս*-ով նախընտրելի, *հմմտ*-ով՝ ընդունելի ձևին:

ե) *տառադարձման և գրության զուգաչևությամբ տարբերակներ*

Երբեմն երկգրություն ունեցող հապավումներ են ստեղծվում ինչպես փոխառյալ հապավումները տարբեր կերպ տառադարձելու (*ՄԱԳԱՏԷ/ՄԱԳԱՏԵ,*

[7] Այս և նման կազմություններն պայմանականորեն ենք ընդգրկում տառային հապավումների խմբի մեջ:

[8] Սրանում առկա է նաև բաղադրիչների շարադասության տարբերություն՝ Երևանի լեզվաբանական պետական համալսարան:

[9] ԳԱ -ն, որպես ընդհանրական տարբերակ, համապատասխան տեղանունների հետ գործածվում է տարբեր երկրների գիտությունների ակադեմիաներն անվանելու համար, ինչպես՝ ՌԴ ԳԱ, Ուկրաինայի ԳԱ և այլն:

ՕՊԵՔ/ՕՊԵԿ), այնպես էլ առանձին հապավումների երկգրության (օր.՝ բուհ/ԲՈՒՀ, ՀԱՍԱՍ/«Համաս» և այլն) պատճառով։

Այս դեպքում ևս դրանք ներկայացնելու եղանակների խնդիր է առաջ գալիս։ Արդյոք երկգրություն ունեցող հապավումների բնագրային օրինակները կբացվեն առանձնաբար, նմանատիպ հապավումները միայն համապատասխան գրությամբ ներանցելու դեպքում, թե՞ միասնաբար, ցանկացած գրությամբ ներանցելու դեպքում։ Սրանով պայմանավորված՝ ինչպե՞ս պետք է դրսևորվի վերաբերմունքը դրանց նկատմամբ։

գ) *բառակապակցության ամբողջական և մասնակի հապավում*

Մի շարք դեպքերում ունենք բառակապակցության տառային ամբողջական հապավում և տառային հապավում՝ վերջին չհապավված բաղադրիչի հետ, ինչպես՝ *ՀԾԿՀ* և *ՀԾԿ հանձնաժողով* (հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով), *ԲԲԸ* և *ԲԲ ընկերություն* (բաց բաժնետիրական ընկերություն), *ԱԳՆ* և *ԱԳ նախարարություն* (Արտաքին գործերի նախարարություն) այլն։ Քանի որ նշված երկրորդ տարբերակներում հապավումը հանդես է գալիս ոչ թե անվանողական արժեքով, այլ որպես բառակապակցության հապավված բաղադրիչ, թերևս ճիշտ է սրանցից հղում տալ ամբողջական հապավումներին։

Հետաքրքրականն այն է, որ տարբեր է նաև այդ ոչ անվանողական արժեք ունեցող հապավումների կապակցելիության աստիճանը. եթե *ՍՊ* (սահմանափակ պատասխանատվությամբ), *ՓԲ* (փակ բաժնետիրական), *ԲԲ* (բաց բաժնետիրական) հապավումները կապակցվում են միայն *ընկերություն*, ՀՅ-ն՝ *դաշնակցություն* գոյականների հետ[10], ապա այլ է վիճակը *ԿԳ, ԿԱ, ՆԳ, ԱԳ* և նման այլ հապավումների դեպքում. սրանք կարող են կապակցվել մեկից ավելի գոյականների հետ (ասենք՝ *ԿԳ / ԱԳ / ՆԳ նախարարություն, նախարար, փոխնախարար, ԿԱ* (կոլեկտիվ անվտանգության) *պայմանագիր/համաձայնագիր, խորհուրդ, ուժեր* և այլն), ընդ որում առանձին դեպքերում դրանք համարժեք ամբողջական տարբերակ չունեն (օր. *ԿԳ նախարար, փոխնախարար*)։ Այստեղ արդեն խնդիր է առաջ գալիս. նմանատիպ հապավումների դեպքում պե՞տք են արդյոք ինչ-որ նշումներ կամ հղումներ, և ինչպե՞ս պետք է տրվեն դրանք։

4. **Տառանուններով կազմված հապավումներ**

Փոխառյալ տառային հապավումների մի առանձին ենթաշերտ են օտար տառանուններով կազմված հապավումները, ինչպես՝ *Սի-Էն-Էն, Բի-Բի-Սի, Էյչ-Էս-Բի-Սի* և այլն։ Ներկայացվելո՞ւ են արդյոք այս հապավումները և, եթե այո, ապա ինչպե՞ս։

5. **Քերականական հատկանիշների արտացոլումը**

Տառային հապավումներն իրենց խոսքիմասային պատկանելությամբ գերազանցապես գոյականի արժեք ունեցող կազմություններ են, սակայն, ինչպես արդեն նշվել է, կան նաև ածականի արժեքով գործածվող հապավումներ։ Այսպես՝ *ԵԱ* - երկարալիք, *ԿԱ* - կարճալիք[11], *ՈՒՄ* - ուլտրամանուշակագույն, *ԹԽՏ* -

[10] Թերևս այս պատճառով էլ նման գործածությունն արդարացված և խրախուսելի չէ, սակայն իրողություն է, որը, անկասկած, պետք է արձանագրվի։

[11] Սրանք, ի դեպ, բնորոշվում են խոսքիմասային տարարժեքությամբ և գործածվում են նաև գոյականի արժեքով՝ ԵԱ - երկար ալիք, ԿԱ - կարճ ալիք։

թռչնաբուծական, տավարաբուծական, խոզաբուծական, *ԳՀ* - գիտահետազոտական, *ՌԾ* - ռազմածովային, *ՄԴ* - սոցիալ-դեմոկրատական և այլն։

Գոյականի արժեք ունեցող տառային հապավումներին բնորոշ են որոշյալության, թվի և հոլովի քերականական կարգերը։ Բոլոր հապավումները, անկախ համապատասխան բառակապակցության վերջին բաղադրիչից, ենթարկվում են ընդհանրական *Ի* հոլովման։

